

***Իմ տնային գրադարանը***

***մանկական միջազգային ստեղծագործական նախագիծ***

Խնկո Ապոր անվան ազգային մանկական (Հայաստան), Նովոսիբիրսկի մարզի Ա.Մ.Գորկու անվան մանկական (Ռուսաստան), Ալմաթիի ԳԿՀ-ի Ս.Բեգալինի անվ. քաղաքային կենտրոնական մանկական (Ղազախստան), Խերսոնի Դ.Չայկայի անվ. մարզային մանկական (Ուկրաինա) գրադարանները և «Տիրասպոլ քաղաքի ԳԿՀ» կազմակերպությունը (Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետություն) հայտարարում են համաժամանակյա մանկական միջազգային ստեղծագործական մրցույթ «Իմ տնային գրադարանը» խորագրով:

***Նպատակը***

\* արժևորել տնային գրադարանը որպես ընտանեկան մշակութային արժեք

***Խնդիրները***

- մշակութային կապերի ամրապնդում Երևան, Ալմաթի, Նովոսիբիրսկ, Խերսոն քաղաքների միջև. ՀՀ, Ղազախստանի, ՌԴ և Ուկրաինայի երեխաների ստեղծագործական հաղորդակցման և համագործակցության միջավայրի ստեղծում
- մանկական ընթերցանության խթանում, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության առաջացում
- ստեղծագործական, արդյունավետ ընթերցանության և հետազոտական հմտությունների /տեղեկության որոնում, արդյունքների ձևավորում և ամփոփում/ զարգացում
- հանդուրժողականության և մարդասիրության դաստիարակում
- հարևան երկրների իրենց հասակակիցների նկատմամբ հետաքրքրության առաջացում

***Ծրագրի իրականացման պայմանները***

Մասնակցության համար հրավիրվում են 10-13 տարեկան երեխաներ. արդյունքները կամփոփվեն 2 տարիքային խմբերով՝ 10-11, 12-13 տ.:

**Ուսումնասիրության առարկան**՝ մասնակիցների կամ նրանց մտերիմների տնային գրադարանները:

Հետազոտության արդյունքները կարող են ներկայացվել նշված եղանակներից որևիցե մեկով հետևյալ ձևաչափերով՝

- հոդվածի /տեքստային ֆայլով.doc, .docx /. նկարազարդումները կցված առանձին գրաֆիկական ֆայլերով .jpg)
- սլայդ-շոուի /սահադիտում/(.ppt և .pptx)
- տեսահոլովակի (.mp4 և .avi) տեսքով:

Տեսանյութին կարող են կցվել սուբտիտրեր կամ բացատրական տեքստ:

Աշխատանքը պետք է ներառի հեղինակի և ղեկավարների մասին տեղեկություն: Ինքնակենսագրությունը (2 պարբերությունից ոչ ավելի)՝ մասնակիցը նշում է անուն, ազգանուն, հայրանուն, տարիքը, դասարանը, բնակության և ուսումնառության վայրերը, իր նախասիրությունները, մրցույթի անվանումը, հասցեն (փոստի), հեռախոսը, e-mail-ը: Տեքստը կարող է գրվել հայերեն կամ ռուսերեն: Աշխատանքներն ընդունվում են gradaran@childlib.am, gayanekar7@gmail.com էլ.փոստերով կամ թղթային և էլ.կրիչով՝ Երևան, Տերյան 42/1 հասցեով (Խնկո Ապոբ անվ. ազգային մանկական գրադարան, 1-ին հարկ), հեռ.060 271 131:

### ***Ժամանակահատվածը***

2017 թվական, 3 փուլով.

I փուլ - սեպտեմբերի 5-ից նոյեմբերի 5-ը աշխատանքների ներկայացում

II փուլ - նոյեմբերի 6-ից - դեկտեմբերի 6-ը Կազմկոմիտեի աշխատանքը, արդյունքների ամփոփում

III փուլ - դեկտեմբերի 11-25-ը արդյունքների հրապարակում

### ***Գնահատման չափանիշները***

- տեղեկությունների հավաստիություն և ստեղծագործության ինքնատիպություն (այդ թվում ուղղակի փոխառության /գրագողության բացակայություն)
- նշված թեմային համապատասխանություն
- տեքստային աշխատանքների և սլայդ-շոունների համար՝ թեմայի տրամաբանական բացահայտման հաջորդականություն, մտքի ավարտունություն, օգտագործված աղբյուրների ցանկի առկայություն
- սահադիտումների համար՝ համապատասխանություն կազմման և դիզայնի ընդունված կանոններին
- տեսանյութերի համար՝ իրականացման որակ և ինքնատիպություն

### ***Չեն ընդունվի՝***

- անվայելուչ մեջբերումներ պարունակող և ուղղակիորեն փոխառված
- չխմբագրված, մեծաքանակ լեզվական և փաստացի սխալներով
- նախկինում համացանցում հրապարակված աշխատանքները

Պահանջներին համապատասխան աշխատանքների հեղինակները կստանան նախագծի մասնակցի հավաստագիր /էլեկտրոնային եղանակով/:

Լավագույն ստեղծագործական աշխատանքները կխմբավորվեն էլ. ժողովածուում, և կտեղադրվեն մրցույթի կազմակերպիչների կայքերում. հեղինակները կպարգևատրվեն դիպլոմներով և շնորհակալագրերով /հիմնականում էլեկտրոնային եղանակով/:

\*\*\* Նախագծի ավարտին բաց տեղեկություն են համարվում բացառապես հետևյալ տվյալները՝ մասնակիցների անուն-ազգանուն, տարիք (մասնակցության պահին), բնակության և ուսումնառության վայր, ինչպես նաև ղեկավարի (գրադարանավար, մանկավարժ, այլ անձինք) անուն-ազգանուն և աշխատավայր:

Վերը թվարկված անձնական տվյալները կարող են օգտագործվել՝

- մասնակիցների ցուցակը կազմելու և հրապարակելու, նախագծի մասնակցության վիճակագրության
- պարզևատրման փաստաթղթերը ստեղծելու և ուղարկելու
- ծրագրի շնորհանդեսային /մեթոդական նյութերի, ստեղծագործական աշխատանքների ժողովածուների հավաքածուներում (տպագիր և էլեկտրոնային) օգտագործելու
- ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով:

Մրցութային աշխատանքները չեն վերադարձվում և կարող են ներկայացվել մանկական ստեղծագործությունների ցուցահանդեսներում, համացանցում (կազմակերպիչների կայքերում), հեռուստա- և ռադիոհաղորդումներում. ինչպես նաև ոչ կոմերցիոն նպատակով մասնակից երկրների տպագրական ՁԼՄ-ներով հրատարակվել (ամբողջությամբ կամ մասնակի):

*Հասցեն.*

Երևան, 0001, Տերյան 42/1

հեռ.՝ +374 60 271131

Էլ.փոստ՝ [gayanekar7@gmail.com](mailto:gayanekar7@gmail.com);

[gradaran@childlib.am](mailto:gradaran@childlib.am)

վեբ կայք՝ [www.natchildlib.org](http://www.natchildlib.org)

Ֆեյսբուքյան կայքէջ՝ [www.facebook.com/natchildlib.org](http://www.facebook.com/natchildlib.org)